ՀՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Վերջին տարիներս ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կոլեկտիվի աշխատանքները հիմնականում ուղղված են եղել հայ ժողովրդի պատմության ութհատորյակի շարադրմանը։ Եվ ահա, ս. թ. փետրվարի 18—24-ը ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնած նիստում քննարկվեց հրատարակության ներկայացված առաջին հատորը։

Կազմակերպելով նման քննարկում, պատմության ինստիտուտի դիրեկցիան նախօրոք պաշտոնապես հանձնարարել էր հանրապետության լավագույն մասնագետներին գրախոսելու ներկայացված աշխատությունը։ Գրախոսները պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ. Ժամկոչյանը, ԳԱ թղթակից-անդամ Բ. Առաքելյանը և պատմական գիտությունների թեկնածու Գ. Տիրացյանը մանրամասնությամբ վեր հանեցին հեղինակների կատարած մեծ աշխատանքը և այն վերլուծելով, միաժամանակ նշեցին նկատված թերությունները և դրանք վերացնելու եղանակները։

Այնուհետև ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցեցին ակադեմիկոսներ Ա. Ռ. Հովհաննիսյանը, Ա. Գ. Հովհաննիսյանը, պատմական գիտությունների դոկտորներ Վ. Հակոբյանը, Հ. Մարտիրոսյանը, Գ. Սարգսյանը, պատմական գիտությունների թեկնածուներ Մ. Իսրայելյանը, Ս. Սարգսյանը, Ն. Հարությունյանը, Ս. Կրկյաշարյանը և գիտաշխատակից Հ. Ղարագյոզյանը։

Ելույթ ունեցողները հատուկ ուշադրություն նվիրեցին ներկայացված աշխատության մեջ հայ ժողովրդի կազմավորման հարցի մեկնաբանմանը։ Նրանց մեծ մասը հավանություն տվեց շարադրանքի ընդհանուր սկզբունքներին այն իմաստով, թե հայերն իբրև ժողովուրդ ծագել և կազմավորվել են Հայկական լեռնաշխարհում, թրակա-պելասգյան և թրակա-փռյուգիական ցեղերի հետ սերտ առնչությունների պայմաններում։ Նշվեց, որ այդ բաժնի հեղինակ Ս. Տ. Երեմյանը նոր նյութեր է շրջանառության մեջ դրել և խոշոր աշխատանք կատարել հարցի լուսաբանման ուղղությամբ։ Միաժամանակ ելույթ ունեցողները նկատեցին, որ հեղինակի փաստարկումները և անցկացրած համարձակ զուգահեռները ոչ բոլոր դեպքերում են համոզիչ։

Երկրորդ կարևոր հարցը, որի վերաբերյալ հայտնվեցին տարբեր կարծիքներ, Հայաստանում ստրկատիրական կարգերի ճգնաժամի և ֆեոդալական հարաբերությունների սաղմնավորման ժամանակն էր։ Այս առթիվ ելույթ ունեցողները, չժխտելով հանդերձ ստրկատիրության գոյությունը Հայաստանում, վիճարկեցին հեղինակների այն միտքը, թե ստրկատիրական հասարակարգը Հայաստանում հարատևել է մինչև Արշակունյաց հարստության անկումը, և որ հայ Արշակունիների պետությունը մինչև վերջն էլ մնացել էր ստրկատիրական։ Քննարկման ժամանակ արտահայտվեց այն միտքը, թե ստրկատիրական կարգերի ճգնաժամը Հայաստանում սկսվել է դեռևս մ. թ. I դարում՝ Տրդատ Բ-ի թագավորության տարիներին և արդեն IV դարում Հայաստանի հասարակությունը և պետությունը տիպիկ ֆեոդալական էր, ուստի և առաջարկվեց հեղինակներին՝ շարադրանքի համապատասխան մասերը վերակառուցել այս տեսակետի համաձայն։

Քննարկման մասնակիցները հատուկ սրությամբ անդրադարձան ներկայացված հատորում Ուրարտուի պատմությանը հատկացված մասերին։ Այս առնչությամբ, իբրև ընդհանուր թերություն, նշվեց, որ Ուրարտուի 350-ամյա պատմությունը շարադրված է չափազանց համառոտ, որի հետևանքով էլ այն ստացվել է սխեմատիկ և չի համապատասխանում ութհատորյակի համար ներկայացված պահանջներին։ Ելույթ ունեցողները արեցին մի շարք արժեքավոր դիտողություններ և առաջարկեցին Ուրարտուի պատմության ամբողջ բաժինը վերաշարադրել, ընդարձակել, ավելի հանգամանորեն անդրադառնալով սոցիալ-տնտեսական և մշակութային հարցերին և հայ-ուրարտական առնչություններին։

Քննարկման ընթացքում արված դիտողությունների երկրորդ խումբը վերաբերում էր հատորի ընդհանուր կառուցվածքին։ Այս կապակցությամբ առանձին սրությամբ դրվեց բաժինների և գլուխների հավասարաչափության հարցը։ Նշվեց, որ նախապատմական ժամանակները շարադրված են շատ ընդարձակ, ավելորդ մանրամասներով, իսկ Ուրարտուի և արեմենյան շրջանի պատմությունը և այլ մասեր դրված են շատ նեղ շրջանակների մեջ։ Հատորի կառուցվածքի առթիվ ար-

վեց մի կարևոր դիտողություն ևս, այն, որ եթե ընդունենք, թե Հայաստանում ֆեոդալական հարաբերությունները ծագել են Արշակունիների թագավորության ժամանակ, ապա Արշակունիների պատմությունը պետք է շարադրել հաջորդ հատորում, իսկ այս հատորը պետք է ավարտել Հայաստանի դաշի վրա այդ հարստության հաստատումով։

Քննարկման մասնակիցների միահամուռ կարծիքն այն էր, որ ներկայացված աշխատությունը դեռևս կարոտ է գիտական և լեզվական խմբագրման։

ՈՒԹՀատորյակի գլխավոր խմբագիր ակադ. Ա. Գ. Հովհաննիսյանն անդրադառնալով ընդդիմախոսների դիտողություններին, նշեց, որ իսկապես ներկայացված աշխատությունը դեռևս չի կարելի լիարժեք համարել։ Ուստի տակավին անելու շատ գործ կա։ Առաջին հերթին պետք է մենագրական բնույթ կրող գլուխները փոփոխել և հարմարեցնել բազմահատորյակի բնույթին։

Քննարկման արդյունքները ամփոփեց ինստիտուտի դիրեկտոր պրոֆ. Գ. Ա. Գալոյանը։

Ս. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ